

կար կանգնուի մէ նորա մօր բնաւ որոյ թեան վերայ՝ որին նա նկարագրուի իբրև մի կնոջ՝ հազազիւտ ուժով և բնաւ որոյ թեան հաստատութեամբ։ Այս կինը — ասուի նա — փառքի արժանի ձիբք ունէր ինքն իւրեան օգնելու երբ ուրիշը նորան չէր օգնում։ բազդի ամենագաժան պահանջները միշտ ընդունելու պատրաստ էր թէպէտ և նորա պու դո՛ր և եռանդը հաւատարուում էր նորա հեղութեան և համբերութեան։ Անփհայտ ձեռքի աշխատանքով նա իւր հինգ գուսարներին տուաւ բաւականաչափ օժիտ՝ որոնք ամուսնութեան միջոցով կարողացան մուտ գործել այնպիսի ընտանիքների մէջ՝ որոնք նոյնչափ պատուաւոր էին՝ որչափ իւրեանց ընտանիքը բայց առաւել հարուստ քան թէ իւրեանցը։ Նորա միակ հը պարտութիւնը ազնուութիւնն էր իսկ միակ ցանկութիւնը — սէրն էր։ Աւայտագօլկի շքեղ շապլ ամրոցում նա իւր հասարակ սովորութիւնները պահեց՝ որոնք նա Գօտինգտօնի գարեջուր եփելու տան մէջ իւրացրել էր։ այս կնոջ միակ հոգսը բոլոր շրջապատող պայծառութեան մէջ իւր որդու ապահովութիւնն էր այս փառահեղ բայց անհաստատ դրութեան մէջ։

Մենք նապօլէօն Բօնաբարտի մօր մասին խօսեցանք իբրև մի նշանաւոր հզօր բնաւորութիւն ունեցող կնոջ մասին։ Աւելինկտօն դոքսի մայրն ևս իւր բնաւորութեամբ պակաս հզօր չէր՝ որի որդին թէ իւր տեսքով և թէ իւր բնաւորութեամբ զարմանալի կերպով նման էր նորան։ Աւելինգտօնի հայրը իբրև նուագածու և նուագայարդար շաանշանաւոր էր բայց որչափ և այս օտարոտի չլինէր։ Աւելինգտօնի մայրը նորան տղէտ էր անւանում և այս կամ այն պատճառով՝ նա իւր կնոջ սցնչափ սիրելի չէր ինչպէս միւս որդիները մինչև այն ժամանակ երբ Աւելինգտօնի ձեռք բերած նշանակութիւնը նորան ստիպեց իւր որդով պարծենալու։

(Ալարոն-նակի)

Գ. Ղ. Բ. Գ. Գ. Գ. Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Հնդկաստանի Բաղաւիա քաղաքացի բարեյիշատակ Մանուկ Յորդանանեան բարեպաշտ հայր 1875 թուականում օրինասահման եղանակաւ ազգականներին և բարեկամներին իւր կտակները աւանդելուց յետոյ՝ կրօնասիրական և ազգասիրական զգացմունքներից ստիպեալ աւանդած է Աղղային հաստատութեանց համար ևս հետևեալ կտակները։ Ա. Իսպահանու սուրբ Ստեփաննոսի եկեղեցուն երէտ հողեր գողութիւն Բ. Բաղաւիոյ հայկական եկեղեցուն հինգ հողեր գողութիւն Գ. Բաղաւիոյ Հայկական բարեգործական ճեմարանին հինգ հողեր գողութիւն։

Թէ վերոյիշեալ Աղղային հաստատութեանց և թէ իւր բարեկամաց և ազգականաց իւր կտակները հատուցանելուց յետոյ՝ յաւելեալ գումարը ևս կտակել է Իսպահանու հայկական ժողովրդեան ազգ. հաստատութեանց

օգտին: Հետևեալ պայմաններով՝ լիազօր հսկողութեան հոգացողութիւնը և ինամակալութիւնը աւանդելով Արարատեան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի դահակալ Ա.Ե.Տ. Վաթուղիկոսի ամենայն Հայոց:

Ա. Ամեն գումարը (կայքը) դրամի փոխարկւի և յանձնւի Վարկաթաշում՝ Բրէտանիան Հնդկիան պահովում ընկերութեան յանուն և յօդու Իսպահանու Հայկական ժողովրդեան՝ տարեկան տոկոսը միայն գործադրելով ըստ կտակին:

Բ. Այս գրամագրու իւր երբէք յետ չպահանջւի քայց եթէ այն ժամանակ միայն երբ Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Վաթուղիկոսը ժողովի դիտութեամբ կարևոր կհամարի յետ ստանալ քաղաքական՝ կամ մի այլ պատճառից ստիպեալ:

Գ. Եթէ այդ գրամագրու իւր կա, և որ համարի յետ ստանալ կամ եթէ ինքն ընկերութիւնը կցանկանայ յետ դարձնել այդ գրամագրու իւր մի այլ ապահով տեղ յանձնւի Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Վաթուղիկոսի հոգատարութեամբ և որոշմամբ և ժողովի դիտութեամբ:

Դ. Արդէս զի այս գրամագրի տոկոսիքը ստացւին անօրինակ և գործադրին ժողովով Իսպահանու Հայոց Արքեպիսկոպոսը ընտրէ մի քահանայ և հայկական Եկեղեցուն պատկանող երեք աշխարհական անձինք Իսպահանու հայ հասարակութիւնից: Այս չորս անձինքնիրից կազմւած ժողովը պէտքէ նիստ ունենայ Իսպահանու Արքեպիսկոպոսի անդամակցութեամբն ու ատենապետութեամբը:

Ե. Այս գրամագրի տոկոսիքի վերջ գործադրուի Իսպահանու մէջ մի օրէնքով և պահպանելու համար իսկ միւս վերջի գործը զրուի Հնդկիան Գորոնք բանալու և պահպանելու համար: Եթէ այս երկու դպրոցները կամ որանցից միւր չբացուի կամ փակուի այդ ժամանակ գրամագրի տոկոսիքի գործադրութիւնը ժողովի գիտութեամբ պիտի դադանայ ուրիշ տեղում նմանօրինակ ազգային Հայոց հաստատութեանց վերայ ըստ վճարահատութեան Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Վաթուղիկոսի: և

Զ. Ժողովը ամենայն տարի պարտաւոր է հաշիւ տալ Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Վաթուղիկոսին: հակառակ դեպքում՝ նա (Վաթուղիկոսը) իրաւունք ունի արձակել ժողովի անդամներին և ընտրել ուրիշներին:

Արդէն Ա.Ե.Տ. Հայրապետ արժանը անօրինելոյ և այս կտակը գործադրելոյ համար Պարսկաստանի և Հնդկաստանի գեր. Առաջնորդ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոսին կարևոր հրահանգ ու պատուէրները տուած է: և կյուսամբ որ ներկոյ տարում կարգիւնաւորուի:

Երանիթ թէ շատերը մեր սիրելի Ազգայիններից հետևեին այս բարեխիշատակ հանգուցելոյ անուն անմահացնող խելացի և ազգօգուտ օրինակին:

* * *

Խմբագրութիւնս այլ և այլ տեղերից յաճախ ստանումէ գրութիւններ, որոնք ի միջի այլոց նկարագրելով քահանայից այրիացեալ ընտանեաց նիւթական և բարոյական թշուառ գրութիւնը՝ առաջարկումն կազմել

